«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ
ARMENIAN WATER AND SEWERAGE CJSC

www.armwater.am

# ՀՐԱՎԵՐ

18.04.14թ. N: 2կ Ք1-03/795 *"Հայջրմուղկոյուղի"*ՓԲԸ-ի կարիքների համար՝
Ձեր N: ______________ համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման ծառայությունների ձեռքբերման

Հարգելի մասնակիցներ

ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի (այսուհետև՝ Գնորդ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված *համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման ծառայությունների ձեռքբերումը:* Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում *«ՀՀՏԿՆՋՏԴԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-11/6-14/22»:*

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 6-րդ հարկ* հասցեով, մինչև *2014թ. մայիսի 06*-ը, *ժամը՝ 15:00-ն:* Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար *Անդրանիկ Մանուկյանը:* Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 6-րդ հարկ* հասցեում, 2014թ. *մայիսի 06-ին, ժամը՝ 15:00-ին:*

Գնման առարկա է հանդիսանում *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի կարիքների համար *համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման ծառայությունների* ձեռքբերումը:

*"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի կարիքների համար *համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման ծառայությունների* ձեռքբերման (որը կազմված է **1** չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում *(Հավելված N1)*, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ *(Հավելված N2):* Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք գնման առարկայի դեպքում՝ ներկայացնում է համարժեք գնման առարկայի անվանումը և ծագման երկիրը (ըստ պահանջի):

*"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ mak@armwater.am: Հեռ՝ (010) 54-28-76:

Պատվիրատու՝ *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ

***Գործառնական տնօրեն*** ***Ա. Բիոլայ***

Գլխավոր գրասենյակ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վարդանանց փակուղի 8

«Հյուսիս-Արևմտյան»
տարածքային մասնաճյուղ
ՀՀ, ք. Աբովյան, 2201, Սարալանջ 2

«Կենտրոն-Արևմտյան»
տարածքային մասնաճյուղ
ՀՀ, ք. Արտաշատ, 0701, Արազի 14

«Հարավային»
տարածքային մասնաճյուղ
ՀՀ, ք. Սիսիան, 3501, Ն. Ադոնցի 11

Head Office
8 Vardanants blind alley,
Yerevan, 0010, Armenia

"North-West"
Regional Branch
2 Saralanj street, Abovyan, 2201, Armenia

"Center-West"
Regional Branch
14 Araz street, Artashat, 0701, Armenia

"South"
Regional Branch
N. Adonts 11, Sisian, 3501, Armenia

1-71
info@armwater.am